

ՀՀ ԼՈՒՈՒՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

(ոլորտի կամ պետական մարմնի անվանումը)

2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ (ՄԺԾ) ՀԱՅՏ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

1. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Մշակույթի ոլորտում ՀՀ Կառավարության կողմից մշակվող և իրականացվող ծրագրերը պայմանավորված են ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, միջազգային պայմանագրերով, ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով: ՀՀ մարզերում մշակույթի համաչափ զարգացման ապահովումը ՀՀ կառավարության որդեգրած մշակութային քաղաքականության մեջ կարևոր հիմնական ուղղություն է:

ՀՀ Լոռու մարզի մշակույթի ոլորտում վերջին տարիներին իրականացվող ծրագրերը ընդհանուր առմամբ նպատակ ունեն բաժրացնելու մշակույթի դերը, պահպանելու ազգային մշակութային ժառանգությունը, արդյունավետ օգտագործելու ներուժը, ապահովելու մշակութային ավանդական ձևերի զարգացումը:

Վերը նշված ծրագրերը ներկայումս մարզում իրականացվում են պետական, ինչպես նաև համայնքային ենթակայության մշակութային կազմակերպությունների, մշակույթի ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, անհատ ստեղծագործողների և ստեղծագործական միավորումների կողմից: Մարզպետարանի կողմից իրականացվում են մարզային նշանակության մշակութային միջոցառումներ: Մարզում գործող մնացած այլ կազմակերպչաիրավական կարգավիճակ ունեցող կազմակերպությունների գործունեությունը համակարգվում և համապատասխան մեթոդական աջակցությունը ցուցաբերվում է մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման միջոցով:

ՀՀ Լոռու մարզի մշակույթի ոլորտում առկա մշակութային կազմակերպությունների ընդհանուր պատկերը՝

Արվեստի դպրոց --- 9 / Վանաձորում 2, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի, Թումանյան, Շնող, Օծուն, Մարգահովիտ մեկական/:

Երաժշտական դպրոց --- 11 / Վանաձորում 4, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան, Մեծավան, Շիրակամուտ, Ախթալա, Աքորի մեկական /:

Գեղարվեստի դպրոց --- 3 / Վանաձոր, Ալավերդի, Սպիտակ մեկական /:

Պարարվեստի դպրոց --- 1 / Վանաձոր /:

Գեղագիտության ազգային կենտրոն --- 1 / Վանաձոր /:

Մանկական ստեղծագործական կենտրոն --- 4 / Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Դարպաս մեկական/:

Արվեստի Պետական քոլեջ --- 1 / Վանաձոր /:

Մշակույթի պալատներ --5, / Վանաձոր 1, Ստեփանավան 1, Սպիտակ 1, Ալավերդի 2, Տաշիր 1, / քաղաքային և գյուղական համայնքներում 42 մշակույթի ակումբներ/:

Մշակույթի և ժամանցի կենտրոն --- 2 / Վանաձոր, Ստեփանավան /:

Ռուսական մշակույթի տուն --- 1 / Վանաձոր /:

Թանգարաններ ---11 / Վանաձորում 3, Ալավերդի 2, Ստեփանավան, Սպիտակ, Դսեղ, Գյուլագարակ, Թումանյան, Մարգահովիտ մեկական /:

Գրադարաններ՝ 75 / քաղաքային 20, գյուղական 55/:

Լոռու մարզային գրադարան --- 1 / Վանաձոր /:

Թատրոններ ---5 / պետական -1, համայնքային - 2, տիկնիկային - 3/

Կամերային նվագախումբ - 1 / Վանաձոր /

Կամերային երգչախումբ - 1 / Վանաձոր /

Երգի պետական թատրոն - 1 / Վանաձոր /

Գեղարվեստական կրթության ԲՈՒՀ-երի մասնաճյուղեր 1 / Վանաձոր /

<< Հորովել >>երգի - պարի համույթ - 1 / Վանաձոր /

<<Լազուր >> ժողովրդական գործիքների համույթ - 1 / Ալավերդի /

<<Ժող. նվագարանների, երգի-պարի>> անսանբլ - 1 / Ստեփանավան /

Մանկական փողային նվագախումբ - 1 / Ստեփանավան /

<<Վարդանանց հետնորդներ>> Մանկական փողային նվագախումբ - 1 / Վանաձոր /

Տասնյակ մանկապատանեկան պարային համույթներ - / Վանաձոր 10, Սպիտակ 2, Ալավերդի 2, Ստեփանավան 1, Մեծավան 1, Դսեղ 1, Շահումյան 1, Շիրակամուտ 1, Արջուտ 1, Սարչապետ 1 Արևաշող

1, Այգեհատ 1, Գեղասար և այլ: Համայնքային մշակութային գյուղական կենտրոններ՝ Շիրակամուտ, Շահումյան, Դարպաս, Մարգահովիտ, և այլ համայնքներում:

Պատմամշակութային Գերեզմանոցներ – 314

Հուշարձաններ՝ 3045 միավոր, 1045-ը պահպանական միավորով:

Ն/Ն	Վայրը Անվանումը	Համառոտ Բնութագիր	Տնօրեն	Աշխ թիվ	Հասցե- Հեռախոս	Շենքային պայմանները
1.	Վանա- ծոր <<Լոռի- Փամ- բակ>> երկրա- գիտա- կան թանգա- րան	Հիմնադրվել է 1938թ-ին, հնագետ Եղիա Մումջյանի կողմից: Թանգարանում առկա է շուրջ 34.000 հազար նմուշներ: Նմուշները թվագրվում են Ք.ա. 4-րդ հազարամյակից մինչև մեր օրեր: Թանգարանում գործում է Հնագիտական, Ազգագրական, և նոր նորագույն պատմության բաժինները:	Նաիրա Առաքելյան	12	Կարեն Դեմիրճյանի 23/1 055/08-99-85	Քարաշեն Բավարար
2.	Վանա- ծոր Կերպար վեստի թան- գարան	Կերպարվեստի թանգարանը ստեղծվել է 1974թ-ին, որպես ազգային պատկերասրահի մաս-նանճյուղ: 1979թ-ից ինքնուրույն կարգավիճակ ստանալով, անցել է քաղաքային ենթակայության: Թանգարանում առկա է շուրջ 1700 աշխատանքներ:	Փափագ Ալոյան	26	Տիգրան Մեծի 52 / 0322 / 4-39-38	Քարաշեն, Բավարար
3.	Վանա- ծոր Ստ.Զոր- յանի տուն- թանգա- րան	1962-64թթ. կառուցված առանձնա-տունը 1983թ-ին ՀՍՍՀ Կուլտորայի Մինիստրության կողմից հաստատվեց որպես տուն-թանգարան: Թանգարանը ունի 7 սրահ, որից երկուսը որպես աշխատասենյակ, մեկը որպես ննջարան: Թանգարանը ունի շուրջ 2000 հազ. միավոր ֆոնդային ցուցանմուշներ:	Լենա Անթառան-յան	14	Զորյանի 24 /0322/ 4-30-93	Քարաշեն, Բավարար
4.	Ալավերդի Միկո-յան եղբայր ների տուն Թան- գարան	Թանգարանը հիմնադրվել է 1982թ-ին: Թանգարանում արտացոլվում են Միկոյան եղբայրների աշխատանքների գործունեությունը: Առկա է հայրական տան ցուցանմուշներ, լուսանկարներ:	Հայկուշ Աղբալյան	3	Սանահին Սարահարթ	Քարաշեն, Բավարար
5.	Ալավերդի ու ՀՀ Ազգ. պատկ- սրահի մասն- ճյուղ	Ստեղծվել է 1987թ-ին	Ռաֆայել Զավախյան	3	Ալավերդի	Քարաշեն
6.	Դսեղ	Տուն-թանգարանը ստեղծվել է	Ռոզա	4	Դսեղ	Քարաշեն

	Հ.Թումանյանի տուն-Թանգարան	1939թ-ին:1994թ-ին Թումանյանի սիրտը թաղվեց թանգարանի բակում: Պահպանվում են հայրական տան իրերը, անձնական իրերը, կյանքին և գործունեությանը վերաբերվող փաստաթղթեր:	Ղազումյան		077. 90-69-89	/ կարիք ունի մասնակի վերանորոգման
7.	Քաղաք Թումանյան	Երկրագիտական թանգարան	Վ. Անդրեաս-յան	3	Թուման-յան	Քարաշեն վերանորոգման ենթակա
8.	Ստեփանավան. Ս.Շահումյանի տուն-Թանգարան	1934թ-ի մայիսի 24-ին Ստեփանավանի շրջխորհրդի գործկոմի որոշմամբ Ս.Շահումյանի աներոջ տունը վերածվել է, որպես Ս.Շահումյանի տուն-թանգարան: 1991թ-ին ՀՀ կառավարության որոշմամբ,թանգարանը վերանորոգվեց որպես Մշակույթիև Ժամանցի կենտրոն՝իր մեջ ներառելով նաև թանգարանային բաժինը: Թանգարանը ունի ցուցադրության ներկայացված 586 ցուցանմուշ, ֆոնդերում առկա է 1515 ցուցանմուշներ:	Արև Թաթոյան /վարիչ/	5	Նժդեհի 4 / 0256 / 2-21-91	Քարաշեն վերանորոգման ենթակա
9.	Կուրթանի Լոռվա կենցաղի և մշակույթի Թանգարան	ՀԱՊԹ-ի Կուրթանի մասնաճյուղը բացվել է 1989թ-ին: 1997թ-ից անցել է համայնքային ենթակայության տակ:Առկա է 105 հնագիտական, 359 ազգագրական ցուցանմուշներ և Լոռու ազգագրական կահավորված սենյակ:	Մելանյա Մաթևոսյան	1	Կուրթան / 0256 / 9-14-02	Քարաշեն երկ-հարկանի, ենթակա է կամ հիմնանորոգման կամ ցանկալի է տեղափոխել նոր վերանորոգվող մշակույթի շենք:
10.	Մարգահովիտ Երկրագիտական Թանգարան	Հիմնադրվել է 2007թ-ին: Ցուցանմուշները դասակարգված են հնագիտական,ազգագրության եվ նոր պատմության բաժիններով: Թանգարանում առկա է շուրջ 1000 անուն ցուցանմուշներ: Թանարանը համաործակցում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Լոռու մարզի հուշարձանների պահպանության կոմիտեի հետ:	Հասարակական կարգով ունի մեկ աշխատող:	1	/ 0322 / 6-90-61	Քարաշեն բավարար
11.	Սպիտակի	Թանգարանը ստեղծվել է 1980թ-ին:Վերաբացվել է	Կլիմենտ Ռստակյան	3	Ս.Ավետիսյան ն1	Քարաշեն /մշակույթի

թանգարան՝ ՊՈԱԿ	2006թ-ին:Թանգարանը գործում է Մշակույթի պալատի ներքնահարկում՝անբարենպաստ պայմաններում: Առկա է շուրջ 2155 հնագիտական և ազգագրական ցուցանմուշներ,կերպար-վեստի գործեր:		/ 0255 / 2-04-77 094 79-49- 43	պալատի շենքում/
-------------------	--	--	---	--------------------

1.2 Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ.

Ելնելով ՀՀ կառավարության վարած քաղաքականությունից, ՀՀ Լոռու մարզում մշակութային կրթության ոլորտում տարվում են աշխատանքներ՝ համակարգի արդիականացման և զարգացման նախադրյալների ստեղծման ուղղությամբ: Մարզի 113 համայնքներից 12-ում գործում են թվով 24 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, որտեղ սովորում են մոտ 1812 երեխա: Երաժշտական և արվեստի դպրոցների որոշ բաժիններ գտնվում են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում. մասնավորապես նրանցում ազգային /2007թ. 2008թ./, լարային և փողային /2009թ-ից./ նվագարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման պետական ծրագիրը հնարավորություն է տալիս մոռացության վտանգից փրկել մի շարք ազգային նվագարանների լինել-չլինելու հարցը:

Ընդհանուր առմամբ ազգային ժողովրդական, լարային և փողային նվագարանների բաժնում պետության հոգածությամբ 2007թ-ց սովորում են **144** երեխաներ:

Աղյուսակ 1.2.1 Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ

Մարզի Վանաձորի, Ստեփանավանի, Տաշիրի, Ալավերդու, Սպիտակի և Օձունի երաժշտական ու արվեստի դպրոցներում և այլ համայնքներում մեթոդական աջակցության շրջանակներում իրականացվում են «վարպետության դասեր», որին մասնակցում են բոլոր դպրոցների աշակերտները և մանկավարժները:

ՀՀ Մշակույթի նախարարության աշխատակիցների մասնակցությամբ շրջայցեր են կազմակերպվել մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, «ազգային,փողային և լարային նվագարանների ուսուցում» ծրագրով նախատեսված բյուջետային հատկացումների մոնիթորինգ իրականացնելու վերաբերյալ:

Ցուցանիշներ	2010թ	2011թ	2012	2013	2014
Տարեկան ֆինանսավորման չափը /հազ. դրամ/	17.485.7	19.077.3	19342.3	18316.9	28.357.9
Ֆինանսավորում ստացած դպրոցների թիվը	12	13	13	13	13
Մեկ սովորողին փոխհատուցված վարձավճարի ամսեկան չափը /գումարը. հազ. դրամ/	10.119	11.040	11.040	10.459	16.186
Ծրագրում ընդգրկված սովորողների քանակը	144	144	146	146	142
Ծրագրի ուղղվածությունը ըստ մասնագիտական բաժինների	ազգային, լարային, փողային	ազգային, լարային, փողային	ազգային, լարային, փողային	ազգային, լարային, փողային	ազգային, լարային, փողային

1.3 Թանգարաններ.

Թանգարանների զարգացման ռազմավարության մշակման գործընթացում կարևոր է թանգարանային հավաքածուների համալրումը, հաշվառումը, պահպանությունը և մշակութային

ժառանգության անխաթար փոխանցումը սերունդներին: Մարզային և հանրապետական նշանակություն ունեցող << Լոռի-Փամբակ >> երկրագիտական թանգարանի ցուցանմուշների թիվը հասնում է 33425 միավորի, որոնք դասակարգված են ըստ բաժինների՝ հնագիտության, ազգագրության և նոր-նորագույն պատմության: Թանգարանը ունի նաև հարուստ գրադարան, որտեղ առկա են թվով 3750 գիրք, որից մասնագիտական գրականությունը կազմում է 60 տոկոսը: Հավաքածուներում ընդգրկված ցուցանմուշներից շատ շատերը ներկայացնում են ոչ միայն Լոռու մշակույթը, այլ նաև ողջ հայկական մշակույթն ու արվեստը՝ մարդկության քաղաքակրթության ձևավորման ակունքներից մինչև մեր օրերը:

1.4 Համերգային կազմակերպություններ.

Լոռու մարզում գործում են Վանաձորի <<Հորովել>> երգի-պարի անսամբլը, կամերային երգչախումբը, կամերային նվագախումբը, երգի թատրոնը, Ալավերդու <<Լազուր>> ժող.գործիքների համույթը, Վանաձորի, Ստեփանավանի, Սպիտակի, Տաշիրի մանկապատանեկան պարային համույթները, որոնք մեծ ներդրում ունեն մարզի մշակութային կյանքի զարգացման գործում և իրականացնում են ոչ նյութական մշակութային արժեքների պահպանմանը, տարածմանն ու զարգացմանն ուղղված գործունեություն:

1.5 Մշակութային միջոցառումներ.

Մշակութային միջոցառումների համար նախատեսված հատկացումները նպատակաուղղված են ազգային և պետական տոների հետ կապված զանգվածային միջոցառումների, հոբելյանների, ցուցահանդեսների, փառատոների և այլ մշակութային միջոցառումների իրականացման համար: Վերջին տարիներին մշակույթի ոլորտում իրականացված ծրագրերը հնարավորություն են տվել ավելի ռացիոնալ օգտագործել ստեղծագործական ներուժը՝ ի շահ հասարակության մշակութային պահանջմունքների բավարարման:

1.6 Պատմամշակութային հուշարձաններ.

Լոռու մարզը Հայաստանի Հանրապետության պատմամշակութային հուշարձաններով հարուստ տարածաշրջաններից է, որտեղ առկա է 3045 հուշարձան՝ 1045 պահպանական գոտիով: Մարզի հուշարձանների ցանկում ընդգրկված են Հայաստանի պատմության և մշակույթի հնագույն շրջանից մինչև 20-րդ դար ընկած ողջ ժամանակաշրջանը ներկայացնող տարաբնույթ հուշարձաններ: Դրանք քարեդարյան, բրոնզեդարյան, անտիկ և միջնադարյան հուշարձաններ են, որոնց մի մասը պեղված և ուսումնասիրված է, կամ պեղման ընթացքի մեջ է, մյուսները՝ փաստագրվածված են հնագիտական հետազոտությունների արդյունքում: Մարզի տարածքում հնագիտական պեղումներով հայտնաբերված և ուսումնասիրվող հուշարձանների շարքում են <<Թագավորանիստ>>, <<Լոռի-Բերդ>> ամրոց-հնավայրերը, որոնք տարածաշրջանի եզակի հուշարձաններից էն: Մարզի նշանավոր հուշարձաններից են նաև Հաղպատի, Սանահինի եկեղեցիներն ու բազմաթիվ վանքեր ու մատուռներ:

2. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 << Լոռու մարզում մշակույթի ոլորտի հիմնախնդիրները կապված են հիմնականում մշակութային հաստատությունների շենք-շինությունների, գյուղական համայնքներում մշակույթի տների և ակումբների, գրադարանների, թանգարանների, պատմամշակութային հուշարձանների, նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի, արհեստի առանձին ճյուղերի պահպանման և զարգացման, երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների զարգացման հետ: Ոլորտում առկա է նաև մասնագետ կադրերի վերապատրաստման խնդիրը:

Մշակույթի առանձին ենթաօլորտներում առկա հիմնական խնդիրներն են.

2.2 Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ. Գեղարվեստական կրթության համակարգում հիմնական խնդիրները կապված են դպրոցների շենքերի վերանորոգման, ջեռուցման համակարգերի ներդրման, նոր գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերման և վերանորոգման, դահլիճների, նոր ուսումնամեթոդական գրականության ձեռքբերման հետ: Ոլորտի հիմնական խնդիրներն են՝

1. շենքային պայմաններ,
2. մասնագետների վերապատրաստման և վերաորակավորման կայուն համակարգի ստեղծում,
3. գյուղական համայնքներում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների սակավություն,
4. ցածր աշխատավարձ,
5. Ստեփանավանի արվեստի դպրոցի շենքի կառուցում և նյութատեխնիկական բազայի համալրում:
6. խիստ վերանորոգման կարիք ունի Օձունի Արվեստի դպրոցը, մասնակի վերանորոգման՝ Տաշիրի երաժշտական դպրոցը, Վանաձորի Գ.Հախինյանի անվան երաժշտական դպրոցը. Ալավերդու արվեստի և գեղարվեստի դպրոցները, Շիրակամուտ համայնքի երաժշտական դպրոցը:

7. Գրեթե բոլոր դպրոցներում (24-ից 13-ում) բացակայում են լոկալ ջեռուցման համակարգերը:
8. Ուսուցիչների ցածր աշխատավարձի հետևանքով մեծ է դպրոցներից որակյալ կադրերի արտահոսքը: Ելնելով սոցիալական իրավիճակից սահմանվում են ցածր ուսման վարձավճարներ, ինչը չի ապահովում դպրոցի պահպանման անհրաժեշտ ծախսերը, իսկ առանձին դեպքերում, սահմանված բարձր վարձավճարը բերում է սովորողների թվաքանակի նվազման:
9. Վանաձորի Արվեստի պետական քոլեջի լուսամուտների վերանորոգում:

2.3 Թանգարաններ.

Մարզի թանգարանների գործունեության բարելավումն ու մշակութային արժեքների անվնաս պահպանությունն ապահովելու համար կարևոր են թանգարանային ոլորտում առկա հիմնախնդիրներից առաջնային համարվող հետևյալ խնդիրների լուծումը՝ առաջիկա չորս տարիների ընթացքում.

1. Շենքի վերանորոգման կարիք ունի Ստեփանավանի Ստեփան Շահումյանի տուն-թանգարանը, Կուրթանի <<Լոռվա Կենցաղի>> թանգարանը զուրկ է տարրական պայմաններից:
2. Թանգարանների զարգացման ռազմավարության մշակման գործընթացում կարևոր է թանգարանային հավաքածուների համալրումը, հաշվառումը, պահպանությունը և մշակութային ժառանգության անխաթար փոխանցումը սերունդներին: Մարզային և հանրապետական նշանակություն ունեցող <<Լոռի-Փամբակ>> երկրագիտական թանգարանի ցուցանմուշների թիվը հասնում է 33425 միավորի, որոնք դասակարգված են ըստ բաժինների՝ հնագիտության, ազգագրության և նոր-նորագույն պատմության: Թանգարանը ունի նաև հարուստ գրադարան, որտեղ առկա են թվով 3750 գիրք, որից մասնագիտական գրականությունը կազմում է 60 տոկոսը: Հավաքածուներում ընդգրկված ցուցանմուշներից շատ շատերը ներկայացնում են ոչ միայն Լոռու մշակույթը, այլ նաև որջ հայկական մշակույթն ու արվեստը՝ մարդկության քաղաքակրթության ձևավորման ակունքներից մինչև մեր օրերը: 2011թ հոկտեմբերին թանգարանին հատկացվել է վերանորոգված քարաշեն շենք, որը կարիք ուն ներքին կահավորանքի:

2.4 Համերգային կազմակերպություններ.

Այս ոլորտում առկա հիմնախնդիրները հիմնականում կապված են երաժշտարվեստի պահպանման, զարգացման և տարածման հետ: Առաջնային խնդիր է համերգային կազմակերպությունների գործունեության ապահովումը, ժողովրդական ստեղծագործությանը աջակցության ցուցաբերումը, հասարակության ստեղծագործական ներուժի օգտագործման, վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը և խթանումը, տարածքային (<< մարզերի հետ) մշակութային համագործակցությունը և մշակութային կյանքի զարգացումը:

2.5 Մշակութային միջոցառումներ.

Այս ոլորտում առկա հիմնախնդիրներն են.

- 1) մշակութային միջոցառումներին հատկացվող պետական միջոցների անբավարարությունը, դրանով պայմանավորված՝ պետական միջոցների հաշվին անցկացվող միջոցառումների ընդհանուր քանակի պակասը:
- 2) զանգվածային՝ հատկապես բացօթյա միջոցառումներ կազմակերպելու նպատակով համապատասխան տեխնիկական /ձայնալուսային/ սարքավորումներով հագեցվածության բացակայությունը:

3. 2015-2017 ԹԹ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

3.1 Թանգարաններ

Թանգարաններում 2015-2017 թթ ընկած ժամանակահատվածում ակնկալվում է լուծել <<Լոռի-Փամբակ>> երկրագիտական թանգարանի ձայնաազդանշանային համակարգի տեղադրումը:

Վանաձորի Արվեստի պետական քոլեջի նոր եվրոպատուհանների տեղադրման աշխատանքներ:

Ստեփանավանի արվեստի դպրոցի շենքի կառուցում:

Օձունի արվեստի դպրոցի շենքը հիմնանորոգում:

3.2 <<Լոռի-Փամբակ>> ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԶԱՅՆԱԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՒՅՔԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

<<Լոռի-Փամբակ>> երկրագիտական թանգարանում ազդանշանային համակարգի տեղադրման նախընտրելիությունը բխում է թանգարանի անվտանգության խնդիրներից:

Ունենալով բարձրարժեք ու հարուստ գիտահիմնական և գիտաօժանդակ նյութերի ֆոնդ՝ թանգարանը չունի իր ֆոնդերն ու ցուցադրվող հավաքածուները անվտանգ պահպանելու հնարավորություն:

Հարկ է նշել նաև, որ ազդանշանային համակարգի տեղադրմամբ ակնկալվում է թանգարան այցելությունների թվի աճ՝ պայմանավորված նրանով, որ ավելի անվտանգ, ապահով ցուցասրահներ ունենալով հնարավոր է դառնում ցուցադրության դնել ավելի բարձր արժեք ներկայացնող հավաքածուներ:

Հավելված 3. 2.1

Սարքավորումներ	Անվանում	Քանակ	Արժեք	Ընդանեմը	
	Օդափոխման սարք	5 հատ	(1 x 70.000)	350000	
	Ջերմաչափ	11 հատ	(1 x 500)	5500	
	Խոնավաչափ	11 հատ	(1 x 5000)	55000	
	Կրակմարիչ	20 հատ	(1 x 60.000)	1200000	
	Համակարգիչ	3 հատ	(1 x 270.000)	810000	
	Հեռախոս	1 հատ	(1 x 25.000)	25000	
	Հեռուստացույց	1 հատ	(1 x 250.000)	250000	
	DVD	1 հատ	(1 x 25.000)	25000	
	Պրոյեկտոր	1 հատ	(1 x 300.000)	300000	
	Ազդանշանային համակարգ (ողջ շենքի համար)			200.000	500000
	Մուտքը նկարահանող համակարգ			150.000	150000
Ֆոնդային գույք	Գլաններ գորգեր և կարպետներ փաթաթելու համար	15 հատ	(1 x 50.000)	750000	
	Ստելաժներ 4 հարկանի, 3 մետրանոց	16 հատ	(1 x 50.000)	800000	
Աշխատասենյակների գույք	Սեղաններ	12 հատ	(1 x 50.000)	600000	
	Աթոռներ	40 հատ	(1 x 15.000)	600000	
	Չիրկիզվող պահարան	4 հատ	(1 x 40.000)	160000	
	Պահարան փաստաթղթերի	6 հատ	(1 x 70.000)	420000	
Ցուցադրության անհրաժեշտ գույք	Ոտիկ մետաղե եռոտանի	20 հատ	(1 x 10.000)	200000	
	Տումբաներ	15 հատ փոքր, 20 հատ միջին, 20	Փոքր (1 x 10.000) Միջին (1 x	850000	

		հատ մեծ	15.000) Մեծ (1 x 20.000)	
	Պատվանդան մեծ հնագիտական նմուշների ցուցադրության համար	1 հատ	(1 x 80.000)	80000
	Պատվանդանը փակող ապակիներ		90.0000	90000
	Ցուցադրության ուղղանկյուն տումբա ապակիներով փակվող	3 հատ	(1 x 50.000)	150000
	Ցուցադրության եռանկյուն տումբա ապակիներով փակվող	3 հատ	(1 x 50.000)	150000
	Ցուցափեղկեր ապակով փակվող	5 հատ	(1 x 50.000)	250000
	Ցուցապահարան ապակե 4 հարկանի	2 հատ	(1 x 80.000)	160000
	Պարաններով իրար միացող մետաղե ծողեր	20 հատ	(1 x 5000)	100000

Ընդամենը

----- 9.030500

Ծանոթացում՝ յուրաքանչյուր իրի
արժեքը նշված է մոտավոր

Վանաձորի <<Մ.Թավրիզյանի անվան Արվեստի պետական քոլեջի >> հրատապ լուծում պահանջող
հարցեր

Նկարագիր

Արվեստի պետական քոլեջը չունի ջեռուցման համակարգ, նոր պատուհանների շնորհիվ հնարավոր կլինի
խնայողաբար օգտագործել էլեկտրոէներգիան, որով տաքացվում են լսարանները և տեղավորվել բյուջեի
կողմից հատկացվող գումարում:

Ն Ա Խ Ա < Ա Շ Ի Վ

Հավելված 3.3.1

h/h	Անվանումը	քանակը /հատ/	միավորի գինը /հազ. դրամ/	ընդամենը
1	Ուսումնական դասարանների և լսարանների պատուհաններ	45	175.000	7875000
2.	Աստիճանավանդակի պատուհաններ	4	175000	700000
3.	Համերգային դահլիճի պատուհաններ	7	175000	1225000
2	ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	9.800.000 դրամ

3.4 Մշակութային միջոցառումներ.

Մարզում մշակութային կյանքը հիմնականում ապահովում և զարգացնում են մասսայական և մշակութային միջոցառումները, որոնց կազմակերպման ողջությամբ պետական աջակցությամբ իրականացվում են մի շարք ծրագրեր: Դրանց նպատակն է հայ մշակութային ժառանգության հանրահռչակումը, երիտասարդ ստեղծագործողների և կատարողների հայտնաբերումն ու խրախուսումը, մարզում առկա ստեղծագործական ներուժի բացահայտումը, մշակույթի, ժողովրդական արվեստի ստեղծագործությունների հանրահռչակումը, միջհամայնքային մշակութային միջոցառումների, մրցույթների կազմակերպումը, համայնքներում մշակութային կյանքի աշխուժացումը:

Մարզում նշվում են բոլոր պետական, ազգային և ծխական տոները:

2013թ. մշակութային միջոցառումների կազմակերպման համար պետական բյուջեից հատկացվել է 3 մլն. 542 հազ. 300 դրամ :

:

3.5.1

2015-2017թթ <<ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ>> ԾՐԱԳԻՐ

<<ՆԱԽԱԳԻԾ>>

2015թ.	1	Կանանց միջազգային օր	մարտ	400.000 դրամ	<< պետ. բյուջե
	2	Ազգային նվազարանների, ժողովրդական երգի, պարի և ասմունքի Լոռու մարզային մրցույթ-փառատոն	մայիս	1.105.000 դրամ	<< պետ. բյուջե
	3	Լոռվա հարսանիք / ոսկե և աղամանդե հարսանյաց հանդիսության կազմակերպում/	տարվա ընթացքում	257.300 դրամ	<< պետ. բյուջե
	4	<<Վարդավառ>>	հուլիս-օգոստոս	880.000 դրամ	<< պետ. բյուջե
	5	Լոռի-Արցախ մշակույթի օր	տարվա ընթացքում	900.000 դրամ	<< պետ. բյուջե
		Ընդամենը		3.542.300 դրամ	
2016թ.	1	Կանանց միջազգային օր	մարտ	400.000 դրամ	<< պետ. բյուջե
	2	Ազգային նվազարանների, ժողովրդական երգի, պարի և ասմունքի Լոռու մարզային մրցույթ-փառատոն	մայիս	1.105.000 դրամ	<< պետ. բյուջե
	3	Լոռվա հարսանիք / ոսկե և աղամանդե հարսանյաց հանդիսության կազմակերպում/	տարվա ընթացքում	257.300 դրամ	<< պետ. բյուջե

	4	<<Վարդավառ>>	հուլիս-օգոստոս	880.000 դրամ	<< պետ. բյուջե
	5	Լոռի-Արցախ մշակույթի օր	տարվա ընթացքում	900.000 դրամ	<< պետ. բյուջե
		Ընդամենը		3.542.300 դրամ	
2017թ.	1	Կանանց միջազգային օր	մարտ	400.000 դրամ	<< պետ. բյուջե
	2	Ազգային նվագարանների, ժողովրդական երգի, պարի և ասմունքի Լոռու մարզային մրցույթ-փառատոն	մայիս	1.105.000 դրամ	<< պետ. բյուջե
	3	Լոռվա հարսանիք / ոսկե և ադամանդե հարսանյաց հանդիսության կազմակերպում/	տարվա ընթացքում	257.300 դրամ	<< պետ. բյուջե
	4	<<Վարդավառ>>	հուլիս-օգոստոս	880.000 դրամ	<< պետ. բյուջե
	5	Լոռի-Արցախ մշակույթի օր	տարվա ընթացքում	900.000 դրամ	<< պետ. բյուջե
		Ընդամենը		3.542.300 դրամ	

3.542.3 հազ. դրամի շրջանակներում 2015-17թթ վականին անցկացվելիք միջոցառումների Նկարագիր-նախահաշիվները

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

<<Կանանց միջազգային օրվան նվիրված>> մարզային միջոցառման

Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատ

Մարտի 8

Միջոցառումը տեղի կունենա Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում: Միջոցառմանը կիրավիրվեն մարզի մշակութային, հասարակական, սոցիալ-տնտեսական կյանքում նշանակալից ավանդ ունեցող կանայք: Հրավիրյալների թիվը հասնում է 400-ի: Հրավիրված կանանց կհանձնվեն ծաղիկներ և նվերներ: Միջոցառմանը ներկա են լինում մարզային և քաղաքային իշխանությունների ղեկավարներ և ուրիշ հրավիրյալներ:

Տոնական համերգի ընթացքում հարգարժան տիկնանց իրենց կատարումներով կշնորհավորեն մարզի շնորհաշատ երգիչ-երգչուհիներ, պարային և գործիքային համույթներ:

Ն Ա Ն Ա Հ Ա Շ Ի Վ

Ն/Ն	Ծախսերի անվանումը	Չափման միավ.	Գումարը /դրամ/
1.	Հուշանվերների	50 x2000 դրամ	100.000
2.	Ծաղիկների և ծաղկեպսակների	հատ	100.000
3.	Շնորհավորական բացիկների պատրաստման	50 x1000 դրամ	50.000
4.	Հյուրասիրության	50 x3000 դրամ	150.000
	Ընդամենը		400.000դրամ

Անցկացման վայրը – ք. Վանաձոր
 Ժամկետ - մայիս

Հայկական ազգային նվագարանները ըստ արժանվույն պրոպագանդելու, հայ ժողովրդական արվեստի ավանդույթների պահպանման և տարածման, ինչպես նաև ժամանակին համահունչ քայլելու նպատակով Լոռու մարզում կազմակերպվում է ամենամյա ժողովրդական նվագարանների, երգի, պարի և ասմունքի Լոռու մարզային փառատոն, որին մասնակցում են մարզի երաժշտական և արվեստի դպրոցների սաները, մասնագիտացված և սիրողական համույթներ, անհատ կատարողներ՝ երեք տարիքային խմբերով:

Փառատոնի անցկացման համար ստեղծվում է կազմկոմիտե և մրցութային հանձնաժողով, որում ներգրավված են մարզի մշակույթի բնագավառի լավագույն մասնագետներ: Փառատոնին ողջույնի ելույթներով մասնակցում են նաև նախորդ տարիների հաղթողները, ինչպես նաև արդեն կայացած կոլեկտիվներ և անհատ կատարողներ: Փառատոնի մասնակիցները պարգևատրվում են դիպլոմներով, պատվոգրերով և հուշանվերներով:

Ծ Ա Խ Ս Ե Ր Ի Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

Անցկացման վայրը ք. Վանաձոր
 Անցկացման ժամկետը՝ հոկտեմբեր-նոյեմբեր /2օր/

Հ/Հ	Հ Ո Դ Վ Ա Ծ Ը	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ Ը	Ք Ա Ն Ա Կ Ը	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ(դր)	ԳՈՒՄԱՐԸ(դր)
1.	<u>Տրանսպորտային միջոցներ</u>	մարդ			
	Մասնակիցների տեղափոխում		30	30x2.000	60.000
	Ալավերդի-Վանաձոր-Ալավերդի		30	30x2.000	60.000
	Շնող – Վանաձոր – Շնող		30	30x2.000	60.000
	Օձուն – Վանաձոր - Օձուն		30	30x1.500	45.000
	Ստեփանավան-Վանաձոր-Ստեփանավան		30	30x1.500	45.000
2.	<u>Տեխնիկական միջոցներ</u>	օր ծառայութ.			
	Դահլիճների վարձակալում		2	40.000	80.000
	Ռադիոսարքավորումների վարձակալում	2	30.000	60.000	
5.	• Ազդագրեր	հատ	20	2000	40.000
	• Փառատոնի խորհրդանիշ	հատ	1	40.000	40.000
	• Տեսաֆիլմի նկարահանում	ծառայութ.	1	80.000	80.000
	• Լուսանկարահանում	ծառայութ.	100հատ	500դրամ	50.000
	• Գովազդ/հեռուստատեսային և ռադիո/	ծառայութ .	-	65.000	65.000

6.	• Մրցանակներ				
	ա) դափնեկիր /փողային-լարային-հարվծ./	հատ	4	4x30.000	120.000
	բ) առաջին կարգ	հատ	4	4x20.000	80.000
	•) երկրորդ կարգ	հատ	4	4x10.000	40.000
	դ) երրորդ կարգ	հատ	4	4x5.000	20.000
	• Խրախուսական մրցանակներ	հատ	30	30x2.000	60.000
7.	• Հաղորդավարական ծառայություն	մարդ	2	2 x 20.000	40.000
	ԸՆԴԱՄԵՆԸ				1.105.000 դրամ

**ԼՈՒՎԱ ՀԱՐՍԱՆԻՔ / ոսկե և ադամանդե հարսանյաց հանդիսության կազմակերպում/
ՆԿԱՐԱԳԻՐ**

Ամուսնությունը մարդկային կյանքի ծագումի չափ հին է:

Այն գոյություն է ունեցել և իրականացվում է տարբեր ձևերով ու ըմբռնումներով՝ սկսած վաղ ժամանակներից:

Դարերի ընթացքում եկեղեցական ժողովների հաստատած կանոններով պետական օրենքների հաստատումով այն եկել հասել է մինչ մեր օրերը:

Ամուսնությունը որպես բնական դաշինք կնքվում է այր և կնոջ միջև, տևական ժամանակով և Աստծո անունով եկեղեցում օրհնվում է ընտանեկան միությունը:

Ավետարանական պատգամը մեզ հուշում է՝

<<Աստծո միացրածը թող,որ մարդ թող չզատե>>:

Դրամական պարզև հորեյարներին	120.000
Հանդիսության տեսաֆիլմի նկարահանման	100.000
Տրանսպորտային ծախսեր	30.000
Չնախատեսված այլ ծախսեր	7.300
Ընդամենը	257.300

**<<Վարդավառ>> մշակութային միջոցառման
ՆԿԱՐԱԳԻՐ**

Վարդավառն արիական տոներից է և կապված է սիրո ու գեղեցկության դիցուհի Աստղիկի հետ: Այն շարժական է և սովորաբար տոնվում է Չատիկից 98 օր հետո: «Վարդավառ» նշանակում է ջրով օծված:

Վարդավառը հայերի սիրելի տոներից է: Այդ օրը մեծ թե փոքր խանդավառությամբ իրար օծում են ջրով, միմյանց Սեր ու Գեղեցկության են տալիս, երգում, պարում, նորոգում աստվածային խորհուրդը, փառաբանում Աստղիկին, իրար նվիրում նորոգ սիրո խորհրդանիշ ծաղիկը՝ Վարդը: Միջոցառումը պետք է սկսել <<Վարդավառին>> նվիրված նախաբանով, դրան միացնել նաև Առաքելական եկեղեցու տոնացույցում տեղ գտած Քրիստոսի պայծառակերպության տոնի թատերականացված մասը:

Սկզբում պետք է լինի <<Վարդավառին>> ծիսական արարողությունը՝ համապատասխան երգերով, պարերով, թատերականացված կտորներով, դրան պետք է հաջորդեն <<Խնդումի>> և

<<Նուրիի>> ծեսերը, Նուրի տիկինի այցելությունը, ժողովրդին բերք ու բարիք բաժանելու արարողությունը:

Միջոցառումը պետք է ավարտվի ջրոցիով և ուրախ համերգային ծրագրով, որին մասնակից են դառնում հրավիրված և հավաքված մարդիկ:

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

**Անցկացման ժամկետը Օգոստոս
Վայրը՝ Գյուլագարակ <<Հեքիաթ>> հանգստի գոտի
Ժամը 12.00**

Ծախսերի անվանումը	Չափման միավ.	Գումարը /դրամ/
Տրանսպորտային ծախսեր	Փոխադրամիջոց	
Միջոցառման սցենարի	ծառայություն 1	40.000
Արտիստների Վճարման	ծառայություն 20 հոգու x 5.000դրամ	100.000
Հաղորդավարական սպասարկման	մարդ / երկու հոգու /	20.000
Մատաղօրհնություն	200մարդ x 1000 դրամ	200.000
Ավանդական Լարախաղաց	ծառայություն / մեկ օրվա /	150.000
Վանաձոր – Գյուլագարակ- Վանաձոր /պարային խմբեր,անհատ կատարողներ/	5 ավտոբուս x 20.000դրամ	100.000
Ալավերդի-Գյուլագարակ – Ալավերդի /պարային խմբեր,անհատ կատարողներ/	2 ավտոբուս x 30.000դրամ	60.000
Ստեփանավան-Գյուլագարակ-Ստեփանվ. /պարային խմբեր,անհատ կատարողներ/	2 ավտոբուս x 10.000դրամ	20.000
Սպիտակ-Գյուլագարակ-Սպիտակ /պարային խմբեր,անհատ կատարողներ/	1 ավտոբուս x 20.000դրամ	20.000
Տաշիր-Գյուլագարակ-Տաշիր /պարային խմբեր,անհատ կատարողներ/	1 ավտոբուս x 30.000դրամ	30.000
Մեծավան-Գյուլագարակ-Մեծավան /պարային խմբեր,անհատ կատարողներ/	1 ավտոբուս x 30.000դրամ	30.000
Վանաձոր – Գյուլագարակ- Վանաձոր /Լրատվական միջոցների /	1 Գազել x 20.000դրամ	20.000
Վանաձոր – Գյուլագարակ- Վանաձոր / սովորական մասնակցների /	2 ավտոբուս x 20.000դրամ	40.000
Չնախատեսված ծախսեր		50.000
Ընդամենը՝		880.000

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐ <<ԼՈՒԻ – ԱՐՑԱՆ>> ՄԻՋՈՑԱՌՄԱՆ
ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Անցկացման վայրը – ԼՂՀ. ք. Մարտակերտ

Ժամկետ - տարվա ընթացքում

Ելնելով մշակույթի համաչափ զարգացման մասին ՀՀ կառավարության հիմնական գերակայություններից՝ կարևորվում է Լոռու մշակույթի ներկայացումը արցախահայությանը, ինչպես նաև հյուսիսային Հայաստանի և Արցախի ազգագրական, ծիսական առանձնահատկություններին երկկողմանի ծանոթությունը: Միջոցառման անցկացման նպատակով արդեն Լոռու մարզից Մարտակերտ են մեկնում մարզի մշակութային լավագույն համույթներ, անհատ կատարողներ, նկարիչներ, գրողներ, դերասաններ՝ ընդհանուր թվով շուրջ 35 մասնակից: Հանդիպում համերգները տեղի են ունենում Մարտակերտի մշակույթի պալատում: Միջոցառմանը ներկա են գտնվում շուրջ 300-400 հանդիսատես:

**<<ԼՈՌԻ - ԱՐՑԱԽ>> ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐՎԱ ԾԱԽՍԵՐԻ
Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ**

Ն/Ն	Ծախսերի անվանումը	Չափման միավ.	Գումարը /դրամ/
1.	Փոխադրամիջոց /Վանաձոր-Մարտակերտ - Վանաձոր/	2 Ավտոբուս	250.000
2.	Արտիստների վճարման և սննդի	30 x15.000	450.000
3.	Տեսաժապավենի նկարահանման	1 օրինակ	50.000
4.	Հուշանվերների	2-3 հատ	150.000
5.	Ընդամենը		900.000 դրամ

2015-2016 ՄԺԾԾ-ով նախատեսվող մշակութային միջոցառումների նոր նախաձեռնություններ

4. ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

2007-2013թթ պետության կողմից իրականացվող ազգային նվազարանների գծով ուսման վարձավճարի փոխհատուցման ծրագիրը խթանեց համայնքներում գործող արվեստի և երաժշտական դպրոցներում ազգային նվազարանների բաժիններում սովորողների թվի ավելացմանը՝ 2004-2006թթ նկատմամբ:

Շուրջ 23 տարի վթարային պայմաններում գործող Վանաձորի Էդ. Կարթմյանի անվան երաժշտական դպրոցը հիմնանորոգվել է և երեխաները արդեն իսկ հաճախում են վերանորոգ ու բարեկեցիկ շենք:նույնպես նույն շենքում է գործում դեռևս ավերիչ երկրաշարժից հետո տնակային պայմաններում գործող Վանաձորի Շ.Տալյանի անվան երաժշտական դպրոցը:

5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2015-2017 թթ. Լոռու մարզպետարանի մշակույթի ոլորտի առաջնային ռազմավարական նպատակներն են՝

Մշակույթի համակարգի գործունեության և կառավարման արդյունավետության զարգացումը, բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը, ոլորտի աշխատողների կարողությունների զարգացմանն ուղղված բարեփոխումների շարունակումը, մասնագիտական կրթության բնագավառում համապատասխան բարձր որակի ապահովումը:

Ոլորտը կարգավորելու, պետական միջոցները առավել նպատակային օգտագործելու համար բարելավման կարիք ունի օրենսդրական դաշտը, ինչը հնարավորություն կտա իրականացնելու կառավարության քաղաքականության գերակայությունները:

6.ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մշակույթի ոլորտի 2015-2017 թթ միջնաժամկետ ծրագիրը միտված է ապահովելու մշակույթի տարբեր բնագավառներում հետևյալ նպատակների իրականացումը:

6.1 Թանգարաններ.

թանգարանային ֆոնդի համալրումը և պահպանումը, ցուցահանդեսների կազմակերպումը և անցկացումը,

- թանգարանային հավաքածուների լիարժեք հանրամատչելիության ապահովումը,
- մշակութային արժեքների թվային շտեմարանի ստեղծման աշխատանքների շարունակումը,
- թանգարանային հավաքածուների անվտանգության ապահովումը, հակահրդեհային և ազդանշանային համակարգերի ձեռքբերումը և տեղակայումը,
- արտերկրյա մասնագետների հետ համատեղ գիտական ուսումնասիրությունների իրականացումը
- միջազգային համագործակցության ընդլայնումը,

6.2 ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

2015-2017 թթ արվեստի ոլորտի առաջնահերթ նպատակներն են.

- ստեղծագործական գործունեության աջակցումն ու խթանումը,
- համերգահյուրախաղային փառատոների գործունեության սուբսիդավորումը:

6.3 ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

2015-2017 թթ. մշակութային միջոցառումների իրականացման առաջնահերթ նպատակներն են.

ա/ Հայ մշակութային ժառանգության հանրահռչակումը:

բ/ Երիտասարդ ստեղծագործողների և կատարողների խրախուսումը:

գ/ Մարզում առկա ստեղծագործական ներուժի բացահայտումը, մշակույթի, ժողովրդական արվեստի ստեղծագործությունների հանրահռչակումը

դ/ Միջհամայնքային մշակութային միջոցառումների, մրցույթների կազմակերպումը:

ե/ Տաղանդավոր երիտասարդների հայտնաբերումն ու խրախուսումը:

զ/ Միջնարգային մշակութային համագործակցության ապահովումը:

է/ Ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքի աշխուժացումը:

ը/ Ազգային ծեսերի և ավանդույթների պահպանումը, տարածումն ու զարգացումը:

7 ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գեղարվեստական կրթության համակարգում հիմնական խնդիրները կապված են դպրոցների շենքերի վերանորոգման, ջեռուցման համակարգերի ներդրման, նոր գույքի ձեռքբերման, դահլիճների վերանորոգման, նոր ուսումնամեթոդական գրականության ձեռքբերման հետ:

Ոլորտի հիմնական խնդիրներն են՝

1. Շենքային պայմանների բարելավում, հիմնանորոգում, կառուցում
2. Ուսումնական օրինակելի պլանների մշակում և հատկացում
3. Մասնագետների վերապատրաստման և վերաորակավորման կայուն համակարգի ստեղծում
4. Գյուղական համայնքների երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների շենքերի հիմնանորոգում և կառուցում
5. Դպրոցի դասատուների աշխատավարձերի բարձրացում

8. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԳԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ՄԺԾԾ ժամանակաշրջանում մշակույթի ոլորտի ծախսային հիմնական գործոններն են.

- Լոռու մարզի թանգարանների, Վանաձորի << Հորովել >> երգի-պարի անսամբլի, կամերային երգչախմբի, կամերային նվագախմբի, երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների աշխատողների աշխատավարձի բարձրացում՝ 2015թ.-50%, 2016թ-30% , 2017թ-10%

9. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2015-2017թթ մշակույթի ոլորտի համար նախատեսված հատկացումների ավելացումը կուղղվի թանգարանների, համերգային կոլեկտիվների /երգչախմբի, նվագախմբի/ գործունեության խթանմանը և մշակութային միջոցառումների իրականացմանը:

Մշակույթի ոլորտում պետական բյուջեից ստացված հատկացումների հետ մեկտեղ ծախսերի իրականացմանն են ուղղվում նաև ՊՈԱԿ-ների սեփական եկամուտները:

Սեփական եկամուտները գոյանում են հիմնականում վճարովի ծառայությունների մատուցումից, տոմսերի վաճառքից:

Վճարովի ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներն ուղղվում են աշխատավարձի լրավճարներին, ապրանքների ձեռք բերմանը, կոմունալ ծառայությունների ծախսերի իրականացմանը: